ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.04.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-10/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-10/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից 20.03.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-10/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Ֆինլոու» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից գնում կատարելու համար մասնակիցներ ներգրավելու նպատակով տեղեկագրում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով հրապարակվել է թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ Գնումների աջակցման կենտրոնը՝

8) հանդես է գալիս որպես գնումների բողոքարկման խորհրդի քարտուղարություն՝

ա. կազմակերպում է խորհրդի աշխատանքները,

բ. գնահատում է ստացված բողոքների (դիմումների) ամբողջականությունը և խորհրդին եզրակացություն է ներկայացնում յուրաքանչյուր բողոքի վերաբերյալ,

գ. հրապարակում է խորհրդի որոշումները.

9) իրականացնում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են.

1. Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է մինչև ինն անդամից կազմված գնահատող հանձնաժողով, որը՝

1) հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը.

2) փոփոխություններ է կատարում հրավերում.

3) պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.

4) բացում և գնահատում է հայտերը.

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

2. Հանձնաժողովն ունի նախագահ և քարտուղար, որոնք նշանակվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ:

Քարտուղարը՝

1. կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

2. ստանում և հաշվառում է հայտերը.

3. կազմում և հանձնաժողովին է ներկայացնում վերջինիս հաստատմանը ենթակա փաստաթղթերի նախագծերը.

4. տրամադրում է հրավեր.

5. համապատասխան փաստաթղթեր կազմելով գրառում և սղագրում է հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկությունները և ապահովում հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը.

6. կազմակերպում է գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրումը.

7. պատասխանատվություն է կրում հանձնաժողովի գործունեության գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության համար.

8. իրականացում է իրեն վերապահված այլ լիազորություններ:

3. Հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտավոր են հանձնաժողովի ողջ գործունեության ընթացքում պահպանել անձնապես իրենց հայտնի դարձած՝ հայտերով

ներկայացված տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ՝ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ.

1. համապատասխան (այդ թվում էլեկտրոնային) փաստաթղթեր կազմելով պետք է ապահովվեն գնմանը վերաբերող տեղեկությունների գրառումը և պահպանումը:

2. Հրավերով՝ մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները: Նույն օրենքով սահմանված գործառույթների շրջանակներում հաղորդակցությունը կարող է իրականացվել էլեկտրոնային եղանակով, ընդ որում՝

1) հրավերը կարող է տրամադրվել էլեկտրոնային եղանակով.

2) հրավերով նախատեսված դեպքում և կարգով հայտերը ներկայացվում են էլեկտրոնային եղանակով:

3. Էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները, ինչպես նաև դրանց տեխնիկական բնութագրերը պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող՝ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:

4. Հայտերի՝ էլեկտրոնային եղանակով փոխանցման և ստացման միջոցների նկատմամբ պարտադիր կարգով կիրառելի են հետևյալ կանոնները՝

1) շահագրգիռ մասնակիցներին մատչելի են հայտերի էլեկտրոնային ձևով ներկայացման համար անհրաժեշտ հատկանիշներին (այդ թվում՝ կոդավորմանը) վերաբերող տեղեկությունները.

2) հայտերի՝ էլեկտրոնային ձևով ստացման էլեկտրոնային սարքերը պետք է երաշխավորվեն ստացված տվյալների ամբողջականությունն ու գաղտնիությունը՝ նվազագույնն ապահովելով հետևյալ պայմանները՝

Ի հավաստումն այն հանգամանքի, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում ամբողջությամբ պահպանվել են օրենքով դրան ներկայացվող պահանջները, գնման ընթացակարգը համակարգող մարմինը կազմել և «Ֆինլոու» ՍՊԸ-ին Էլեկտրոնային փոստի միջոցով վերադարձրել է համակարգի միջոցով համախմբված ֆայլը, որում ընկերության կողմից լրացված են հայտին ներկայացվող պահանջները (այդ թվում նաև ծառայությունների գները):

Կազմակերպվել է էլետրոնային գնում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերը սահմանում են.

6. հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ, գլխավոր ֆինանսիստ Ռ. Ասիկյանի 12.02.2014թ.-ի թիվ ԴԴ-3-Ե-710 գրությամբ՝ ուղղված Կենտրոնին, դատական դեպարտամենտը տեղեկացրել է, որ իր կողմից www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում մասնակիցների ներկայացրած հայտերի բացման ժամանակ՝ 2014թ. փետրվարի 12-ին ժամը 10:00-ին, արձանագրվել է հետևյալ խնդիրը.

Գնահատման ժամանակ «Պիտանելիության չափորոշիչ» բաժնում մասնակցի կողմից կցված «Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում» հավելվածի ֆայլը ակտիվ չէ դիտելու համար /առանձնակի դեպքերում համապատասխան մասում տեսանելի է միայն ֆայլի պայմանական անունը/ կամ կցված չէ: ՀՀ դատական դեպարտամենտը խնդրել է պարզաբանել ներկայացված իրավիճակում տվյալ մասնակցի պիտանելիության չափորոշիչը՝ անցնում է սահմանված շեմը, թե ոչ: Սահմանված շեմը չանցնելու դեպքում քննարկվում /գնահատվում/ է ֆինանսական չափորոշիչը, թե ոչ:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար պարոն Կ. Թամազյանին 20.02.2014թ. ուղղված թիվ ԴԴ-3-Ե-890 գրությամբ՝ ՀՀ դատական դեպարտամենտը վերոհիշյալ հանգամանքները նույնպես դիտել է որպես տեխնիկական խնդիրներ և տեղեկացրել է, որ վերոգրյալով պայմանավորված, ինչպես նաև մասնակցիների ներկայացրած հայտերի գնահատման հետագա ընթացքի մասով պարզաբանում ստանալու նպատակով՝ հիշյալ ծածկագրով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների նիստերը կասեցվում են: Միաժամանակ, հաշվի առնելով գնման հրատապությունը՝ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի կարգադրությունը՝

համապատասխան ստորաբաժանմանը պարզաբանելու իրենց գործողությունները՝ նման տեխնիկական խնդիրներ առաջանալու պայմաններում:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ժ/պ Հ. Թունյանը 05.03.2014թ-ի թիվ 07/023-407 գրությամբ հայտնել է, որ Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումը իրականացնող կազմակերպությանը, որն ուսումնասիրելով խնդիրը, տեղեկացրել է, որ հայտերը պատրաստված են օգտագործողի /մասնակցի/ համակարգչային սարքավորման վրա, ուստի դրանց պարունակությունը սպասարկողին հասանելի է դառնում բացումից հետո և ներկայացրել է armeps համակարգում «Տոնեքս», «Բևեռային ուղի», «Ֆինլոու» և «ԱՐԹ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ների ներկայացրած փաթեթները: Փաթեթների ուսումնասիրությամբ պարզվել է, որ համակարգում առկա են միայն այն ֆայլերը /փաստաթղթերը/, որոնք տեսանելի են գնահատման հանձնաժողովին:

Ընկերությունը նշել է, որ չնայած համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերությունը հայտնել է, որ գնահատման հանձնաժողովի համար տեսանելի ֆայլերը առկա են, Կենտրոնն առաջարկել է շարունակել գնման գործընթացը՝ չքննարկելով ոչ ամբողջական հայտերը:

Միաժամանակ, ՀՀ դատական դեպարտամենտը Կենտրոնին տեղեկացրել է, որ առկա է տեխնիկական խնդիր, ինչը հաստատվել է նաև համակարգի սպասարկումը իրականացնող կազմակերպության կողմից: Մասնավորապես, եթե վերջինս նշել է, որ փաստաթղթերը /ֆայլերը/ տեսանելի են, սակայն դրանք ինչ-ինչ պատճառներով ներբեռնելը հնարավոր չի լինում, ապա մասնակիցների մրցակցությունն ապահովելու, մրցույթում բոլորի համար հավասար պայմաններ ստեղծելու և օբյեկտիվությունն ապահովելու նպատակով պետք է արձանագրվեր, որ առկա է տեխնիկական խնդիր և նման պայմաններում գնման գործընթացը շարունակել հնարավոր չէ: Փոխարենը արձանագրել է, որ armeps համակարգում «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով ընթացակարգում տեխնիկական խնդիրներ առկա չեն:

Կենտրոնի գրությանը հաջորդել է ՀՀ դատական դեպարտամենտի 07.03.2014թ-ի թիվ ԴԴ-3-ե-1177 գրությունը, որով Ընկերությունը տեղեկացվել է, որ գնահատող հանձնաժողովի նիստը կկայանա 2014թ.-ին, մարտի 10-ին, ժամը 11:00-ին:

14.03.2014թ.-ին info@armeps.am հասցեատիրոջից Ընկերության էլեկտրոնային հասցեին է ուղարկվել Fwd: Է-Մրցույթի ՄՀ-ի ավտոմատ ծանուցում – ՄՀ.92935 Որակավորման անհամապատասխանության արդյունքների հրապարակում, որտեղ նշվել է, որ

«Ֆինլոու» ՍՊԸ կազմակերպությունը չի անցել ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար թարգմանության ծառայությունների ձեռքբերում մրցույթի հրավերի հայտերի ներկայացման որակավորման հաջորդ փուլ: Կից ուղարկվել է Targmanchakan eval report.rar փաթեթը, որը պարունակում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և excel ֆայլը, որտեղ հստակ երևում է, որ «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից լրացված հայտում նշված են նաև առաջարկվող գները:

Համաձայն՝ «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման 14.03.2014թ. նիստի թիվ 7 արձանագրության 1-41-րդ չափաբաժինների մասով ընտրված /1-ին տեղը զբաղեցրած/ մասնակից է ճանաչվել «Գ ԸՆԴ Հ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ն:

Միաժամանակ, նույն օրը հանձնաժողովը հաստատել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և նույն օրը որոշել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը սահմանում է.

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1. նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2. դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

4. Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում: Անհրաժշտության դեպքում «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից կներկայացվեն բողոքը հիմնավորող լրացուցիչ ապացույցներ:

Բողոքը քննող հանձնաժողովին «Ֆինլոու» ՍՊԸ-ն խնդրում է՝

1. որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտումների վերացմանը,

2. դադարեցնել գնումների ընթացակարգի ընթացքում գնահատող հանձնաժողովի 2014թ.-ի մարտի 14-ի որոշումները՝ թիվ 7 արձանագրությամբ 1-41-րդ չափաբաժինների մասով «Վի Գրուպ» ՍՊԸ-ին առաջին տեղն զբաղեցնող մասնակից, իսկ 1-32-րդ և 34-41-րդ չափաբաժինների մասով «Գ ԸՆԴ Հ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին որպես 2-րդ տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին,

3. դադարեցնել 14.03.2014թ.-ին հանձնաժողովի հաստատած պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

«Ֆինլոու» ՍՊԸ-ն, ի լրումն 20.03.2014թ. ներկայացված բողոքի, նույնական փաստական և իրավական հիմքերով 01.04.2014թ. թիվ 3283-2 գրությամբ կրկին դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին: Վերոհիշյալ գրությամբ Ընկերության կողմից ներկայացվել են լրացուցիչ հարցադրումներ: Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու մրցույթին մասնակցելու համար «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ամբողջությամբ պահպանվել են օրենքով դրան ներկայացվող պահանջները և գնման ընթացակարգը համակարգող մարմինը կազմել և «Ֆինլոու» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով վերադարձրել է համակարգի միջոցով համախմբված ամբողջ ֆայլը, որում Ընկերության կողմից լրացված են եղել հայտին ներկայացվող ամբողջ պահանջները /գնման ընթացակարգին մասնկացելու դիմումը, այդ թվում նաև ծառայությունների գները/, ինչպես նաև այն, որ մինչ օրս հայտնի չէ համակարգի սպասարկումն իրականացրած կազմակերպության անվանումը, այն մեթոդները, որոնք կիրառվել են ուսումնասիրությունների արդյունքում, առկա չէ նրանց կողմից տրված որևէ եզրակացություն և պարզ չէ, թե որոնք են ստեղծված իրավիճակի պատճառները, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով՝ բողոքը քննող հանձնաժողովին «Ֆինլոու» ՍՊԸ-ն խնդրել է հայտնել՝

1. ո՞ր կազմակերպությունը կամ Ա/Ձ-ն է իրականացրել համակարգի տեխնիկական սպասարկումը,

2. ի՞նչ մեթոդներով է կատարվել ուսումնասիրությունը,

3. ինչու՞ հնարավոր չի եղել ներբեռնել «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ֆայլերը,

4. ուսումնասիրության ընթացքում արդյո՞ք տեսանելի են եղել ֆայլերը, թե ոչ,

5. ի՞նչ բովանդակություն է տեսանելի եղել «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ուղարկված ֆայլում:

2. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 25.03.2014թ. N 07/032-549 գրությամբ դիմել է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.03.2014թ. «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 28.03.2014թ. N ԴԴ-1-Ե-1736 գրությամբ «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացրել է «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ուղարկված գրության մեջ նշված դրույթի վերաբերյալ, համաձայն որի. «...մինչև խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու...», նշել է, որ վերջինս ներկայացված բողոքների մասին տեղեկանում է www.gnumner.am ինտերնետային կայքի (այսուհետ՝ նաև Կայք) «Բողոքարկում» բաժնից: Կայքում հայտարարությունների հրապարակման վերաբերյալ պարբերաբար կատարվել են դիտումներ, իսկ 21.03.2014 թվականի աշխատանքային օրվա ընթացքում Կայքի համապատասխան բաժինը քաղվածքի տեսքով արտատպվել է, որտեղ առկա չի եղել Կենտրոնի 25.03.2014թ. N 07/032-549 գրությամբ ներկայացված՝ «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի դրույթների պահանջների պահպանմամբ՝ 14.03.2014 թվականին հրապարակվել է շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը համարվել է անգործության ժամկետ:

Օրենքով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո՝ 21.03.2014 թվականին, ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար հայտարարված «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով ընթացակարգի արդյունքում «Վի Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվել է անհրաժեշտ թարգմանության ծառայությունների ձեռքբերման պայմանագիր և կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հրապարակումները:

3. ԳԲԽ-10/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից 20.03.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-10/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-10/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Ֆինլոու» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր ընկերություն) կողմից 20.03.2014թ. ներկայացված բողոքը, «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով էլեկտրոնային շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), N «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.02.2014թ. ժամը 10:00-ին, 10.03.2014թ. ժամը 11:00-ին և 14.03.2014թ. ժամը 10:00-ին կայացած նիստերի՝ համապատասխանաբար NN 5, 6 և 7 արձանագրությունները և «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 28.03.2014թ. N ԴԴ-1-Ե-1736 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով էլեկտրոնային շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Գնահատող հանձնաժողովը 14.03.2014թ. կայացած նիստի N 7 արձանագրության համաձայն՝ 1-41-րդ չափաբաժինների մասով՝ ընտրված (1-ին տեղն զբաղեցրած) մասնակից է ճանաչել «Վի Գրուպ» ՍՊԸ-ն, իսկ 1-32-րդ և 34-41-րդ չափաբաժինների մասով՝ 2-րդ տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Գ ԸՆԴ Հ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ն:

1. «Ֆինլոու» ՍՊԸ-ն 20.03.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքով միջնորդել է կիրառել ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են բողոքով ներկայացված խախտումների վերացմանը:

1-ին կետի վերաբերյալ.

Բողոքը քննող հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված միջնորդությունը, պարզելով, որ այն հիմնավոր չէ, պարզ չէ, թե ինչ ժամանակավոր միջոցի մասին է խոսքը, նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ չէ ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար ու ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի պահանջներով՝ 25.03.2014թ. ժամը 17:00-ին կայացած նիստի ժամանակ որոշում է ընդունել «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից 20.03.2014թ. բողոքով ներկայացված միջնորդությունը մերժել:

2. «Ֆինլոու» ՍՊԸ-ն 20.03.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ, գլխավոր ֆինանսիստ Ռ. Ասիկյանը 12.02.2014թ. թիվ ԴԴ-3-ե-710 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ տեղեկացնելով, որ դեպարտամենտի կողմից www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում մասնակիցների ներկայացրած հայտերի բացման ժամանակ՝ 2014թ. փետրվարի 12-ին ժամը 10:00-ին, արձանագրվել է հետևյալ խնդիրը.

Գնահատման ժամանակ «Պիտանելիության չափորոշիչ» բաժնում մասնակցի կողմից կցված «Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում» հավելվածի ֆայլը ակտիվ կամ կցված

չի եղել դիտելու համար: ՀՀ դատական դեպարտամենտը խնդրել է պարզաբանել ներկայացված իրավիճակում տվյալ մասնակցի պիտանելիության չափորոշիչը՝ անցնում է սահմանված շեմը, թե ոչ: Սահմանված շեմը չանցնելու դեպքում քննարկվում /գնահատվում/ է ֆինանսական չափորոշիչը, թե ոչ:

ՀՀ դատական դեպարտամենտը ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար պարոն Կ. Թամազյանին ուղղված 20.02.2014թ.-ին N ԴԴ-3-Ե-890 գրությամբ հայտնել է, որ վերոհիշյալ հանգամանքները նույնպես դիտել է որպես տեխնիկական խնդիրներ և տեղեկացրել է, որ վերոգրյալով պայմանավորված, ինչպես նաև մասնակցիների ներկայացրած հայտերի գնահատման հետագա ընթացքի մասով պարզաբանում ստանալու նպատակով՝ հիշյալ ծածկագրով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների նիստերը կասեցվում են: Դեպարտամենտը միաժամանակ հաշվի առնելով գնման հրատապությունը՝ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի կարգադրությունը՝ համապատասխան ստորաբաժանմանը պարզաբանելու Պատվիրատուի գործողությունները՝ նման տեխնիկական խնդիրներ առաջանալու պայմաններում:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 05.03.2014թ. N 07/023-407 գրությամբ հայտնել է, որ Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումը իրականացնող կազմակերպությանը, որն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ հայտերը պատրաստված են օգտագործողի /մասնակցի/ համակարգչային սարքավորման վրա, ուստի դրանց պարունակությունը սպասարկողին հասանելի է դառնում բացումից հետո և ներկայացրել է armeps համակարգում «Տոնեքս», «Բևեռային ուղի», «Ֆինլոու» և «ԱՐԹ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ների ներկայացրած փաթեթները: Փաթեթների ուսումնասիրությամբ պարզվել է, որ համակարգում առկա են միայն այն ֆայլերը /փաստաթղթերը/, որոնք տեսանելի են գնահատման հանձնաժողովին:

Բողոքաբեր ընկերությունը նշել է նաև, որ չնայած համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերությունը հայտնել է, որ գնահատման հանձնաժողովի համար տեսանելի ֆայլերը առկա են, Կենտրոնը առաջարկել է շարունակել գնման գործընթացը՝ չքննարկելով ոչ ամբողջական հայտերը:

Միաժամանակ, ՀՀ դատական դեպարտամենտը Կենտրոնին տեղեկացրել է, որ առկա է տեխնիկական խնդիր, ինչը հաստատվել է նաև համակարգի սպասարկումն իրականացնող կազմակերպության կողմից: Մասնավորապես, եթե վերջինս նշել է, որ փաստաթղթերը /ֆայլերը/ տեսանելի են, սակայն դրանք ինչ-ինչ պատճառներով ներբեռնելը հնարավոր չի

լինում, ապա մասնակիցների մրցակցությունն ապահովելու, մրցույթում բոլորի համար հավասար պայմաններ ստեղծելու և օբյեկտիվությունն ապահովելու նպատակով պետք է արձանագրվեր, որ առկա է տեխնիկական խնդիր և նման պայմաններում գնման գործընթացը շարունակել հնարավոր չէ, փոխարենն արձանագրել է, որ armeps համակարգում «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով ընթացակարգում տեխնիկական խնդիրներ առկա չեն:

Բողոքաբեր ընկերությունը նշել է, որ Կենտրոնի գրությանը հաջորդել է ՀՀ դատական դեպարտամենտի 07.03.2014թ. թիվ ԴԴ-3-ե-1177 գրությունը, որով Բողոքաբեր ընկերությունը տեղեկացվել է, որ գնահատող հանձնաժողովի նիստը կկայանա 2014թ. մարտի 10-ին, ժամը 11:00-ին:

14.03.2014թ.-ին info@armeps.am հասցեատիրոջից Բողոքաբեր ընկերության էլեկտրոնային հասցեին է ուղարկվել Fwd: Է-Մրցույթի ՄՀ-ի ավտոմատ ծանուցում – ՄՀ.92935 Որակավորման անհամապատասխանության արդյունքների հրապարակում, որտեղ նշվել է, որ «Ֆինլոու» ՍՊԸ կազմակերպությունը չի անցել ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար թարգմանության ծառայությունների ձեռքբերում մրցույթի հրավերի հայտերի ներկայացման որակավորման հաջորդ փուլ: Կից ուղարկվել է Targmanchakan eval report.rar փաթեթը, որը պարունակում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և excel ֆայլը, որտեղ հստակ երևում է, որ «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից լրացված հայտում նշված են նաև առաջարկվող գները:

«ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2014թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ 1-41-րդ չափաբաժինների մասով ընտրված /1-ին տեղը զբաղեցրած/ մասնակից է ճանաչվել «Գ ԸՆԴ Հ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ն:

Բողոքաբեր ընկերությունը խնդրել է դադարեցնել գնումների ընթացակարգի ընթացքում գնահատող հանձնաժողովի՝ թիվ 7 արձանագրությամբ 1-41-րդ չափաբաժինների մասով «Վի Գրուպ» ՍՊԸ-ին առաջին տեղը զբաղեցնող մասնակից, իսկ 1-32-րդ և 34-41-րդ չափաբաժինների մասով «Գ ԸՆԴ Հ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին որպես 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին 2014թ. մարտի 14-ին ընդունած որոշումները, ինչպես նաև դադարեցնել 14.03.2014թ.-ին հանձնաժողովի հաստատած պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը::

2-րդ կետի վերաբերյալ.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 02.04.2014թ. ժամը 16:30-ին կայացած բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում բողոքբողոքաբեր ընկերության կողմից ներկայացվեց «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին «Ֆինլոու» ՍՊԸ-ի և մյուս մասնակիցների կողմից ներկայացված հայտերը: Ներկայացվեց նաև էլեկտրոնային համակարգի համապատասխան քաղվածքը՝ ֆինանսական գնահատումը, որն իրենից ներկայացնում է ընթացակարգին մասնակցող բոլոր կազմակերպությունների գնային առաջարկները, ինչպես նաև Ընթացակարգին առնչվող այլ փաստաթղթեր:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ բողոքաբեր ընկերության՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով պահանջվող դիմումը և գնային առաջարկն առկա չեն, ինչի արդյունքում վերջինիս հայտը մերժվել է:

Բողոքարկման հանձնաժողովի այն հարցին, թե բողոքաբեր կազմակերպության հայտը մերժելիս ինչ ոչ իրավաչափ գործողություն կամ անգործություն է թույլ տվել պատվիրատուն, բողոքաբեր կազմակերպության ներկայացուցիչն ընդունեց, որ թե պատվիրատուի և թե գնահատող հանձնաժողովի կողմից որևէ ոչ իրավաչափ գործողություն կամ անգործություն թույլ չի տրվել:

ՀՀ դատական դեպարտամենտը 12.02.2014թ. թիվ ԴԴ-3-ե-710 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ տեղեկացնելով, որ դեպարտամենտի կողմից www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում մասնակիցների ներկայացրած հայտերի բացման ժամանակ՝ 2014թ. փետրվարի 12-ին ժամը 10:00-ին, արձանագրվել է, որ գնահատման ժամանակ «Պիտանելիության չափորոշիչ» բաժնում մասնակցի կողմից կցված «Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում» հավելվածի ֆայլը ակտիվ կամ կցված չի եղել դիտելու համար: ՀՀ դատական դեպարտամենտը խնդրել է պարզաբանել ներկայացված իրավիճակում տվյալ մասնակցի պիտանելիության չափորոշիչը՝ անցնում է սահմանված շեմը, թե ոչ: Սահմանված շեմը չանցնելու դեպքում քննարկվում /գնահատվում/ է ֆինանսական չափորոշիչը, թե ոչ:

ՀՀ դատական դեպարտամենտը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.02.2014թ. N ԴԴ-3-ե-890 գրությամբ հայտնել է, որ վերոհիշյալ հանգամանքները նույնպես

դիտել է որպես տեխնիկական խնդիրներ և տեղեկացրել է, որ վերոգրյալով պայմանավորված, ինչպես նաև մասնակցիների ներկայացրած հայտերի գնահատման հետագա ընթացքի մասով պարզաբանում ստանալու նպատակով՝ հիշյալ ծածկագրով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների նիստերը կասեցվում են: Դեպարտամենտը միաժամանակ հաշվի առնելով գնման հրատապությունը՝ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի կարգադրությունը՝ համապատասխան ստորաբաժանմանը պարզաբանելու Պատվիրատուի գործողությունները՝ նման տեխնիկական խնդիրներ առաջանալու պայմաններում:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 05.03.2014թ. N 07/023-407 գրությամբ հայտնել է, որ Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը, որն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ հայտերը պատրաստված են օգտագործողի /մասնակցի/ համակարգչային սարքավորման վրա, ուստի դրանց պարունակությունը սպասարկողին հասանելի է դառնում բացումից հետո և ներկայացրել է armeps համակարգում «Տոնեքս», «Բևեռային ուղի», «Ֆինլոու» և «ԱՐԹ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ների ներկայացրած փաթեթները:

Առաջացած խնդրի քննարկման ընթացքում մասնակիցների ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի՝ համակարգ ներբեռնելու ընթացքում թույլ են տրվել հաջորդական քայլերի խախտումներ, որոնց արդյունքում էլ փաստաթղթերը չեն կցվել հայտին: Փաստորեն համակարգում առկա են եղել բողոքաբեր ընկերության կողմից ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված դիմումի և գնային առաջարկի ֆայլերի անվանումները, սակայն ֆայլերը բացակայել են, ինչի արդյունքում էլ հնարավոր չի եղել ներբեռնել դրանք: Տեսանելի են եղել միայն բողոքաբեր ընկերության կողմից համակարգում համապատասխան թվային դաշտում լրացված առաջարկվող գինն արտահայտող թվերը:

Կենտրոնի կողմից փաթեթների ուսումնասիրությամբ պարզվել է, որ համակարգում առկա են միայն այն ֆայլերը /փաստաթղթերը/, որոնք տեսանելի են գնահատման հանձնաժողովին և պատվիրատուին առաջարկել է շարունակել գնման գործընթացը՝ չքննարկելով ոչ ամբողջական հայտերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 05.12.2013թ. N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի՝

- 20-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը:
- 21-րդ կետի համաձայն՝ գնահատման գործընթացը կատարվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Գտնում ենք, որ «Ֆինլոու» ՍՊԸ-ի հայտը մերժելով գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և թույլ չի տվել գնումների մասին ՀՀ օրենդրությամբ սահմանված պահանջների խախտում:

3. «Ֆինլոու» ՍՊԸ-ն, ի լրումն 20.03.2014թ. ներկայացված բողոքի 01.04.2014թ. թիվ 3283-2 գրությամբ ներկայացրել է լրացուցիչ հարցադրումներ: Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու մրցույթին մասնակցելու համար «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ամբողջությամբ պահպանվել են օրենքով դրան ներկայացվող պահանջները և գնման ընթացակարգը համակարգող մարմինը կազմել և «Ֆինլոու» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով վերադարձրել է համակարգի միջոցով համախմբված ամբողջ ֆայլը, որում Ընկերության կողմից լրացված են եղել հայտին ներկայացվող ամբողջ պահանջները /գնման ընթացակարգին մասնկացելու դիմումը, այդ թվում նաև ծառայությունների գները/, ինչպես նաև այն, որ մինչ օրս հայտնի չէ համակարգի սպասարկումն իրականացրած կազմակերպության անվանումը, այն մեթոդները, որոնք կիրառվել են ուսումնասիրությունների արդյունքում, առկա չէ նրանց կողմից տրված որևէ եզրակացություն և պարզ չէ, թե որոնք են ստեղծված իրավիճակի պատճառները, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով՝ բողոքը քննող հանձնաժողովին «Ֆինլոու» ՍՊԸ-ն խնդրել է հայտնել՝

1. ո՞ր կազմակերպությունը կամ Ա/Ձ-ն է իրականացրել համակարգի տեխնիկական սպասարկումը,

2. ի՞նչ մեթոդներով է կատարվել ուսումնասիրությունը,

3. ինչու՞ հնարավոր չի եղել ներբեռնել «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ֆայլերը,

4. ուսումնասիրության ընթացքում արդյո՞ք տեսանելի են եղել ֆայլերը, թե ոչ,

5. ի՞նչ բովանդակություն է տեսանելի եղել «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ուղարկված ֆայլում:

- **3-րդ կետի վերաբերյալ.**

Գտնում ենք, որ «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ի լրումն բողոքի 01.04.2014թ. N 122 գրությամբ ներկայացված՝ պնդումներն անհիմն են, քանի որ «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգին մասնակցելու համար «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում օրենքով դրան ներկայացվող պահանջներն ամբողջությամբ պահպանելու, հայտին ներկայացվող բոլոր պահանջները լրացված /գնման ընթացակարգին մասնկացելու դիմումը, այդ թվում նաև ծառայությունների գները/ լինելու, համակարգի միջոցով համախմբված ամբողջ ֆայլը Պատվիրատուի կողմից կազմելու և «Ֆինլոու» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստով վերադարձնելու վերաբերյալ չի ներկայացվել հիմնավորող որևէ ապացույց:

Ինչ վերաբերում է «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից ի լրումն բողոքի 01.04.2014թ. N 122 գրությամբ ներկայացված հարցադրումներին, ապա դրանք կրում են խորհրդատվական բնույթ և չեն պարունակում պահանջ:

Հետևաբար Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 1-41-րդ չափաբաժինների մասով «Վի Գրուպ» ՍՊԸ-ին առաջին տեղն զբաղեցնող մասնակից, 1-32-րդ և 34-41-րդ չափաբաժինների մասով «Գ ԸՆԴ Հ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին որպես 2-րդ տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին 14.03.2014թ. թիվ 7 արձանագրությամբ կայացված որոշումները, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը դադարեցնելու պահանջներով «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից 20.03.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքն անհիմն է:

ԳԲԽ-10/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից 20.03.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-10/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը, Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից 20.03.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Մնացականյան Արման

Անդամներ՝ Գրիգորյան Էդվարդ

Հայրապետյան Ռազմիկ